4. Կենսաբանություն

1. Սույն Ընթացակարգով կարգավորվում են 2022-2023 ուսումնական տարվա Հայաստանի Հանրապետության դպրոցականների «Կենսաբանություն» առարկայի օլիմպիադայի /այսուհետ՝ Օլիմպիադա/ կազմակերպման և անցկացման հետ կապված հարաբերությունները:
2. Աշակերտների անվանական ցուցակների ձևանմուշները, առաջադրանքները, պատասխանները, արդյունքները և Օլիմպադայի վերաբերյալ այլ տեղեկությունները տեղադրվում են www.olymp.am և lib.armedu.am կայքերում:
3. Օլիմպիադան կազմակերպվում է երեք փուլով՝ առաջին /դպրոցական/, երկրորդ /մարզային/ և երրորդ /հանրապետական/:
4. Օլիմպիադան անցկացվում է երեք խմբերով.
   I խումբ՝ 9-րդ դաս., II խումբ՝ 10-րդ դաս., III խումբ՝ 11-12-րդ դաս.:
5. Օլիմպիադայի երեք փուլերի տարբերակները՝ ըստ խմբերի, կազմում է հանրապետական առարկայական հանձնաժողովը:
6. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է դպրոցում:
7. Օլիմպիադան կազմակերպելու համար դպրոցի տնօրենի հրամանով ստեղծվում է հանձնաժողով, որի կազմում չեն կարող ընդգրկվել «Կենսաբանություն» առարկայի մասնագետներ:
8. Առաջին փուլին կարող է մասնակցել ցանկացած սովորող՝ այդ մասին տեղեկացնելով դպրոցի տնօրինությանը:
9. Դպրոցի տնօրենը մինչև 2022թ. նոյեմբերի 10-ը ներառյալ հայտագրված աշակերտների վերջնական ցուցակը՝ ըստ ձևանմուշի, ներկայացնում է մարզպետարան /Երևանի քաղաքապետարան/:
10. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը/ մինչև 2022թ. նոյեմբերի 14-ը ներառյալ մասնակիցների ցուցակները՝ ըստ ձևանմուշի, ներկայացնում է հանրապետական կազմկոմիտեին՝ info@olymp.am հասցեով:
11. Հանրապետական կազմկոմիտեն հաստատում է առաջին փուլի մասնակիցների ցուցակը, որը տեղադրվում է www.olymp.am և lib.armedu.am կայքերում:
12. Օլիմպիադայի առաջին փուլն անցկացվում է 2022թ. նոյեմբերի 23-ին, ժամը 13:00-ին:
13. Օլիմպիադայի առաջին փուլի արդյունքները չեն բողոքարկվում:
14. Դպրոցի տնօրենը պատասխանների լրացված ձևաթղթերը հանձնում է մարզպետարան /Երևանի քաղաքապետարան/ մինչև 2022թ. նոյեմբերի 25-ը, ժամը 17:00-ն:
15. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը/ դպրոցներից ստացված պատասխանների ձևաթղթերը ներկայացնում է ՀՀ ԿԳՄՍՆ, մինչև 2022թ. դեկտեմբերի 1-ը, ժամը 17:00-ն:

16. Պատասխանների ձևաթղթերը համակարգչային ծրագրի միջոցով մշակվում, ստուգվում և արդյունքները հրապարակվում են երկրորդ փուլի անցկացման օրվանից առնվազն մեկ շաբաթ առաջ:
17. Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է մարզպետարանների /Երևանի քաղաքապետարանի/ կողմից սահմանված վայրում:
18. Երկրորդ փուլին մասնակցում են առաջին փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած աշակերտները՝ հանրապետական կազմկոմիտեի որոշման համաձայն:
19. Օլիմպիադայի երկրորդ փուլն անցկացվում է 2023թ. փետրվարի 2-ին և 3-ին, ժամը 11:00-ին:
20. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը /Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությունը/ պատասխանների ձևաթղթերը ներկայացնում է ՀՀ ԿԳՄՍՆ, մինչև 2023թ. փետրվարի 7-ը ժամը 17:00:
21. Օլիմպիադայի երկրորդ փուլի մասնակիցների ցուցակները և ստացած միավորները տեղադրվում են olymp.am կայքում:
22. Երկրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են մարզպետարանների /Երևանում քաղաքապետարանի/ դիպլոմներով և գովասանագրերով:
23. Օլիմպիադայի երրորդ փուլն անցկացվում է 2023թ. փետրվարի 25-ին և 26-ին, սկիզբը՝ ժամը 10:00- ին՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից սահմանված վայրում:
24. Երրորդ փուլին մասնակցում են երկրորդ փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած մասնակիցները՝ համաձայն հանրապետական կազմկոմիտեի որոշման:
25. Օլիմպիադայի երրորդ փուլի աշխատանքների արդյունքների բողոքարկումը կատարվում է օլիմպիադայի անցկացման վայրում՝ առարկայական հանձնաժողովի կողմից նշանակված ժամին:
26. Երրորդ փուլի մասնակիցներին տրվում են օլիմպիադայի մասնակցության հավաստագրեր:
27. Երրորդ փուլի հաղթողները պարգևատրվում են ՀՀ ԿԳՄՍ նախարարության դիպլոմներով:
28. Օլիմպիադայի երրորդ փուլի 10-12-րդ դասարանների դիպլոմակիրները համարվում են կենսաբանության միջազգային օլիմպիադայի ՀՀ թիմի հավակնորդներ: